ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 828, www.court.am

№ ԴԴ-3-Ե-75-6653

« 27 » օգոստոսի 2025թ.

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Ս. ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2)

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Սույնով ծանուցում եմ, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. օգոստոսի 11-ի որոշմամբ, 2-րդ չափաբաժնի մասով, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, սահմանվել է անգործության ժամկետ մինչև 2025թ. օգոստոսի 21-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում պայմանագիր կնքելու մասին որոշումը չի բողոքարկվել:

Տեղեկացնում եմ, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով և առաջարկում՝ սույն ծանուցումն ու պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները,

պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ, ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին (համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758) համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է կնքվելիք պայմանագրի գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԴԱՎԻԹ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ (+37410) 511-774, 511-788